

Նորէն ապրէ՛, նորէն եղիր դրախտավայր,
 Ո՛վ գեղեցիկ աստուածունի վարդավառ,
 Ո՛վ մայրական ջերմիկ օրոց խանդակաթ,
 Քընացուր զիս չեղայ քերթող յուսահատ,
 Երգեցի քեզ պարզ քընարով մը ոսկի
 Պատրանքին մէջ երիտասարդ հասակի,
 Ու ծերունի՝ սիրաբւս մըխաց ու մըխաց
 Քեզի համար նըւագներով երկնասլաց...

ԲԱՅՅԻ

Կ'երթամ նընջել, Արշալոյսն է...

(Կը հեռանայ)

ԱԼԻՇԱՆ

Ես հեռուն,
 Ազրիականի ծըփանքներէն օրօրուն՝

Պիտի մընամ հայրենիքէս տարագիր,
 Քեզի կարօտ, ո՛վ գեղեզման, ո՛վ երկիր՝
 Որուն փոշին փառքի շունչով քըրքըրեց
 Հոռմէական բանակին դէմ Տիգրան մեծ...

(հետգհետ հեռանալով տեսարանէն, տխուր ու
 մեղմիկ ճայնով մը)

Մընաս բարո՛վ, հին օրօրան քաջերու,
 Ես ալ կ'երթամ շիրիմիս մէջ հանգչելու,
 Ու կը թողում բոլոր հոգիս՝ որ քընար...
 Դեռ կը հընչէ քաղցրբալուր քեզ համար...
 Ձի դեռ կ'ապրիս, ու դեռ կ'ապրիմ՝ հահապետ,
 Եւ բանաստեղծ, և դու փիւնիկ, աճունէդ
 Վերածընած անմահութեամբ՝ լուսեղէն,
 Հոգիդ լեցուն Ազատութեան արեւէն...

(վարագոր)

Ապրիլ 916

ԱՐՄԵՆ-ԵՐԿԱՅ

Ք Ա Ր Մ Ա Ն Ե Ո Ւ Ա

(ԱՐԱՐՈՒԱՆ Բ. ԽՄԵԵՐԳ)

Ալէն կը լըսուի հընչին մը փողի.
 Ուրիշ մը ձայնէն կը պատասխանէ.
 Երկու կողմանէ բոմբիւնք հետեւեղ
 Ու հետեւակաց, երկիրն կը թընդայ.
 Յանկարծ կը ցըցուի օդոյ մէջ դրօշ,
 Այլ ոմբն յանկարծ պարզած մեղ կու գայ.
 Ահա կ'երեւի վաշտ մը կազմ պատրաստ.
 Ահա ուրիշ մ'ալ անոր դէմ կ'եմէնէ:

Աղէն մէջտեղին հող չի տեսնուիր.
 Աղէն սուսերներն գիրար կը վանեն.
 Մէկը սըրտին մէջ կը մըխէ միւսին.
 Արին կը հոսի, իսկ վերքեր կ'աճին:
 — Աղէօք անոնք ո՛վ են: Ո՞ր օտարական
 Ան շքեղ ուղիէն կըռուելու կու գայ.
 Կամ ո՛վ է այն որ եղբուած է փորկեղ
 Իր ծընած երկիրն կամ թէ հոն մեռնիկ:

Մէկ երկրէ բլուր, ո՞հ. ու կը խօսին
 Մէկ լեզու. եղբայր կը կոչեն զիրար.
 Անոնց ամենուն դէմքերէն բլուր
 Մի եւ նոյն լեզուն յըստակ կ'երեւի.
 Ամենուն սոսնուուն եղաւ այս երկիր,
 Որ իմա արեան մէջ կը շաղկապուի,

Զոր ուրիշներէն բաժնեց ընտելութիւն
 Ապեանց եւ ծովու մեծ պատնէշներով:

Վա՛հ: Անոնցմէ ո՛վ սուսերն սըրբապիղծ
 Քաշեց՝ խոցելու նախ սիրտն իր եղբոր:
 Ո՛վ սարսափ: Աղէօք անիծեալ մարտին
 Նողկայի եւ գարշ պատհառն ի՞նչ է:
 Չեն գիտեր. ամէնքն եկած են մահ տալ
 Եւ կամ մահ աճուլ, բայց առանց կըրթի.
 Մի սպարապետի ծախուած են անոնք.
 Անոր հետ կըռուին, չեն հարցներ ինչուն:

Վա՛հ դժբաղդութիւն: Բայց կիներ չունի՞ն,
 Զունի՞ն մարեր այն յիմար մարտիկներ:
 Ինչո՞ւ ամէնքն սլ չեն գար դէպ ի դաշտ
 Զիրենք այս անարգ կըռուէն կորեղու
 Եւ ծերունիներն որ գերեզմանի
 Մուրը մըտածութեամբք են արդէն լեցուած,
 Ինչո՞ւ չեն փորձեր՝ կատաղի ամբոխն
 Խոհեմ խօսքերով մեղմուլ, ամոքել:

Ինչպէս որ երբեմն գեղջուկը նըստած
 Իր անդորր ուղիին ցած սեմին վըրայ՝
 Կ'երազէ տարափն որ կ'իջնէ հեռուն

Դաշտերուն վրայ՝ զորս չէ արօրած․
Այսպէս պիտ' լրտէք՝ իւրաքանչիւրդ, որ
Հեռուն կը տեսնէ գունդերը զինուած,
Պատմել՝ հազարներ ինկնող մեռնողներն,
Եւ Թըշուառութիւնն այրած քաղաքն։

Հո՛ն կախուած են տես մայրենի շրթէն
Որդիք՝ որ արթուն մտքով կը սովորն
Վերադիր անուամբ որոշել զանոնք՝
Որ օր մ'երթան պիտ' մեռնելու նոյնպէս․
Հո՛ս կիներ շրջել խումբեր կը կազմեն,
Պրճնազարդ՝ գօտով, մանասկենքով լի,
Զոր պարտեալներուն Թըշուառ կիներէն
Իրենց այրերն կամ նշանածքն են կորզած։

Ո՛հրժքաղուծիւն, ու դժբաղուծիւն․
Դիերով արդէն երկիրն է ծածկուած․
Ամէն կողմ արիւն դաշտն համատարած․
Զայներն կը գողան, զայրուեր կ'աճի։
Բայց կարգերուն մէջ՝ բաժնուած ու Թերի՝
Շըփոթ կը տիրէ, գունդ մը տեղի տայ․
Եւ խուժանփն մէջ՝ ելքէն յուսակտուր՝
Ապրելու կեանքի սէրն կը ծնանի։

Ինչպէս կը ցրուի ցորենն օդոյ մէջ
Հոսուելով լեցուն հեծանոցով միծ․
Այսպէս ընդարձակ տարածութեան շուրջ
Յիր ու ցան կ'լլան պարտեալ ռազմիկներն։
Բայց ահա յանկարծ խումբ մը սոսկալի
Համբուն վրայ կ'եննեն փախչող զօրքերուն․
Բայց ուսէն կը զգան հեւքը մերձաւոր
Վեր ի վայր եղած անասնո՛ւ նրժոյգին։

Գողալով կ'իյնան ոտքը Թըշնաւոյն,
Կը Թողուն գէնքերն ու կ'ըլլան գերի․
Եւ յաղթողներուն մեծդի աղաղակ
Մեռնող Թըշուառին ողբը կը ծածկէ։
Սուրհանդակ մ'եղած համետին վրայ՝
Նամակ մը կ'առնու եւ ճամբայ կ'ենէ,
Կը խորազանէ, կը լսիլէ ուղին,
Եւ ամէն պալատ ձայնէն կը զարթնու։

Ինչու դաշտերէն, տուներէն բոլոր
Դէպ ի պողոտայն կը վազէք ամենքդ․
Ինչու ամէն ոք հոգով կը հարցնէ,
Երբայր ի՞նչ լսւ լուր միասին դու բերիր։
Ուսկից կու գայ նա, դժբաղներ, գիտէք,
Ու կը կարծէք որ ուրախ լուրեր տայ։

Երբայր եղբօր, ո՛հ, արիւնք քամեց․
Ահա սոսկալի լուրը կու տամ ձեզ։

Շուրջս կը լրսեմ զըւարթ կանչիւններ․
Տահարն կը պըննի, երգը կը հնչէ․
Արդէն մարդասպան խրմբերգէ կ'եննեն
Գոհութեան իղծեր՝ զոր երկինք կ'ատէ։
Ապստանց ոլորտէն մերթ օտարականն
Կը շրջէ աչքերն դէպ ի դաշտն ի վայր,
Կը տեսնէ քաջերն որ փոշի կ'ուտեն,
Եւ անգուժ ժըպտով կը հաշուէ զանոնք։

Օ՛ն, ըշտապեցէք, լացուցէք գունդերն,
Աւկախ Թող միման հանդէսք ու խաղեր,
Հո՛ն, դըրօշակներն ձեզի կը սպասեն․
Թըշնամի կ'իջնէ․ նա արդէն հո՛ս է։
Յաղթողներ, արդեօք տըկար ու քիչ էք․
Բայց, ատոր համար կու գայ համարձակ
Եւ սիրայօժար՝ այն դաշտերուն մէջ՝
Ուր ձեր հարազատ եղբայրներն ինկան։

Դո՛ւ, որ շատ անձուկ էիր քու որդւոցդ,
Դո՛ւ, որ չես գիտեր անդորել զիրենք,
Ո՛վ ողորմ երկիր, օտարք կ'ընդունիս․
Այսպիսի կասկած կը լքուի վրադ։
Թըշնամի մ'որուն բնաւ չես վնասած,
Նախատեղով՝ քու սեղանդ կը նըստի․
Կապուտն՝ յիմարաց բոլոր կը բաժնէ,
Սուրն՝ արքաներուդ ձեռքէն կը խլէ։

Ինքն ալ է յիմար։ Երջանիկ եղաւ
Մէկը արիւնով եւ անարգանքով։
Միայն յաղթուողին համար չեն վնասներն․
Ամբարշտին խիղճն արցունք կը դառնայ։
Յաջող ճամբուն մէջ՝ միսչեւ տեղ մ'անշուշտ
Յաւտենական վրէժն զինք չընկճեր․
Բայց կը նըշանէ, կը հըսկէ, կը սպասէ․
Ու հոգեվարքին վրայ կը հասնի։

[բոլոր,

Միմեք նմանութեամբ ստեղծուած ենք
Լոկ մէկ փրկանքի որդիք ենք ամենքս,
Ո՛ր ժամուն, եւ ո՛ր կողմն ալ աշխարհիս
Շընչելու ըլլանք այս կենսատու սիւքն,
Երբայր ենք միշտ, նոյն սուրբ ուխտով

[կապուած,

Անիծուած է այն՝ որ զայն կը խրդէ,
Որ լացող տկարին վրայ կը խրոխտայ,
Ու հոգի մ'ամմահ կը տըրտմեցնէ։

Թրգմ. Հ. Ա. Ա. ՅՈՎԱԿԻՄՅԱՆ